

ՀԱՅ – ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՆԱԻՐԻ ԱՐՇՐՈՒՆԻ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԺԲ.00.02 – Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մոնիցինգայլ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

ՏԱՐԳՏՅԱՆ ՆԱԻՐԻ ԱՐՇՐՈՒՆԻ

**ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ФИНАНСОВОГО
КОНТРОЛЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

ЕРЕВАН - 2022

**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ Պետական կառավարման
ակադեմիայի գիտական խորհրդում**

Գիտական ղեկավար՝

թեկնածու, դոցենտ

իրավաբանական գիտությունների

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

դոկտոր, պրոֆեսոր

Փանոսիկ Արտաշեսի Սուքիասյան

իրավաբանական գիտությունների

Հովհաննես Միքայելի Ստեփանյան

իրավաբանական գիտությունների

թեկնածու

Երանուհի Ստեփանի Թումանյանց

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ Ոստիկանության կրթահամալիր


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. նոյեմբերի 3-ին, ժ. 14:00-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հ. Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2022թ. սեպտեմբերի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

իրավաբանական գիտությունների թեկնածու



Ջ.Հ. Հայրապետյան

**Тема диссертации была утверждена в Академии государственного
управления РА**

Научный руководитель:

кандидат юридических наук,

доцент **Гарник Арташесович Сукиасян**

Официальные оппоненты:

доктор юридических наук,

профессор **Оганес Микаелович Степанян**

кандидат юридических наук

Ерануи Степановна Туманянц

Ведущая организация:

Образовательный комплекс полиции РА

Защита состоится 3-его ноября 2022г. в 14:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянского университете (0051, г. Ереван, О. Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале библиотеки Российско-Армянского университета.

Автореферат разослан 23-его сентября 2022 года:

Ученый секретарь специализированного совета,

кандидат юридических наук



Дж. А. Айрапетян

ՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը. ներկա ժամանակաշրջանում ՀՀ առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից մեկը՝ իրավական պետության և քաղաքացիական հասարակության ձևավորումն է, որի արդյունավետ լուծման առաջնահերթ նախապայմանը ժամանակակից պահանջներին համահունչ տնտեսական բարեփոխումներն են, որի առանցքը ֆինանսական գործունեության ոլորտում ֆինանսական վերահսկողության և հսկողության, ֆինանսական կարգապահության արդյունավետ արմատավորումն է, ինչը հանդիսանում է օրինականության ապահովման և իրավակարգի ամրապնդման հասարակական և պետական երաշխիք:

Ֆինանսական վերահսկողության արդիականությունը ՀՀ-ում պայմանավորված է անկախության հռչակումից հետո կատարված ամենամեծ փոփոխություններից մեկի՝ շուկայական հարաբերություններին հատուկ ֆինանսական վերահսկողության համակարգի ձևավորումով, որի կայունությամբ և պետական վերահսկողության գործունեության արդյունավետության աստիճանով է պայմանավորված մեր հանրապետության տնտեսական ինքնիշխանությունը և անվտանգությունը:

Արդի պայմաններում ֆինանսական վերահսկողությունը պետք է լինի արհեստավարժ, շարունակական և գործուն՝ ընդգրկելով պետական, տնտեսական և սոցիալ-մշակութային բոլոր ոլորտները, ինչպես նաև օպերատիվ, ճշգրիտ և տնտեսվար: Վերահսկողությունը պետք է նաև անկողմնակալ լինի, ինչին կարելի է հասնել վերջինիս խնդիրները և գործառույթները դնելով գերատեսչական առումով վերահսկողության արդյունքներով շահագրգռված մարմինների և անձանց վրա, ինչպես նաև վերահսկողության գործառույթներ իրականացնող յուրաքանչյուր անհատի անձնական պատասխանատվությամբ: Պետական վերահսկողության թույլ լինելը բացասաբար է անդրադառնում կառավարման ամբողջ համակարգի վրա: Սա Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ առկա ծանր վիճակի գործոններից մեկն է:

Ֆինանսական վերահսկողության օգնությամբ ոչ միայն բացահայտվում են պետական, տնտեսական ու ֆինանսական կարգապահության խախտումները, այլև կանխվում են այդ խախտումները, նախանշվում են տնտեսվարման կատարելագործման ուղիները:

Այսպիսով, ֆինանսական վերահսկողությունը կարևոր լծակ է նյութական, դրամական միջոցների արդյունավետ և խնայողաբար օգտագործման, կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական ֆոնդերի սոցիալ-տնտեսական ծրագրերով նախատեսվող առաջադրանքների կատարման համար: Լավ կազմակերպված, բազմակողմանի ֆինանսական վերահսկողությունը բարձրացնում է յուրաքանչյուր աշխատողի պատասխանատվությունն իր տեղամասի աշխատանքի համար, նպաստում արտադրական և տնտեսական ծրագրերի կատարմանը:

Ֆինանսական վերահսկողությունը կարևոր դեր է կատարում երկրի տնտեսության կառավարման արդյունավետության բարձրացման գործում: Պատահա-

կան չէ, որ ՀՀ սահմանադրությունը յուրովի է ամրագրում հանրապետության տնտեսական կարգը, սահմանելով, որ տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայի տնտեսությունն է, ինչը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Օրվա հրամայական է ֆինանսական վերահսկողության կատարելագործումը՝ որպես պետական կառավարման կարևորագույն գործառույթ:

Ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորումն իրավագիտության կարևոր հիմնախնդիրներից է, որի գիտական վերլուծությունը, օրենսդրական կարգավորման սահմանների, ծավալների և հատկապես գործառույթների և գործառնությունների հստակեցումը կնպաստեն ճիշտ հասկանալ և գնահատել ֆինանսական վերահսկողության համակարգի էությունը, դերը և նշանակությունը հասարակության, տնտեսական և պետական անվտանգության ապահովման գործում: Հիշատակված հարցադրումները վկայում են ֆինանսական վերահսկողության գործունեության իրավական կարգավորման արդիականության և լուծումներ որոնելու հրատապության մասին, որոնցով պայմանավորված է «ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորման» հիմնախնդրի գիտական ուսումնասիրությունների անհրաժեշտությունը:

Արդիական է պետական ֆինանսական վերահսկողության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը, որը պետք է լուծվի համակարգային մոտեցմամբ: Այս ամենով է պայմանավորված հետազոտման գիտական նորույթ լինելը, ինչպես նաև ֆինանսական վերահսկողության հիմնախնդիրների ուսումնասիրման հանդեպ համակարգային մոտեցմամբ և վերջինիս նպատակներով, խնդիրներով, այս բնագավառում արդի պայմաններում առաջ քաշվող հարցերով:

Ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների գործունեության ուսումնասիրությունները վկայում են, որ ֆինանսական վերահսկողության կազմակերպումը հանրապետությունում ունի մի շարք թերություններ: Թերությունների մեծ մասը բաժին է ընկնում ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորման կատարելագործմանը, որը թույլ կտա նպատակային և արդյունավետ օգտագործել ֆինանսական ռեսուրսները, ժամանակին բացահայտել, կանխել և ֆինանսական իրավախախտումները, ֆինանսական հարկադրանքի միջոցների կիրառմամբ վերականգնել պետությանը հասցված ինչպես դրամական, այնպես էլ գույքային վնասները: Պետության՝ ֆինանսական գործունեության ոլորտում օրինականության խախտումների հայտնաբերումը, կնպաստի հակաիրավական արարքների, դրանք ծնող պատճառների և պայմանների բացահայտմանը և վերացմանը:

Առենախոսության հիմնախնդրի գիտական բովանդակությունը պայմանավորված է ֆինանսական վերահսկողության և հսկողության տեսակների, ձևերի և մեթոդների նորմատիվ-իրավական կարգավորումների մշակածև արդյունավետության բարձրացման կապակցությամբ արված առաջարկություններով, որոնք ունեն տեսական և գործնական նշանակություն:

Հետազոտության մեթոդական հիմք են հանդիսանում ճանաչման ընդհանուր գիտական և մասնավոր մեթոդները, այդ թվում դիալեկտիկական, համեմատական, համակարգակառուցվածքային, ձևական-տրամաբանական, տեխնիկա-իրավաբանական վերլուծության մեթոդները, ինչպես նաև իրավական ուսումնասիրությունների ժամանակ օգտագործվող այլ մեթոդներ:

Ատենախոսության կոնկրետ հիմնահարցերի հետազոտման ընթացքում կիրառվել են իրավագիտության և տնտեսագիտության այնպիսի մասնավոր մեթոդներ, ինչպիսիք են վիճակագրության, հաշվապահական հաշվառման, ինչպես նաև արտասահմանյան ֆինանսավարկային, վիճակագրական և միջազգային այլ կազմակերպությունների ուսումնասիրությունների հրապարակած արդյունքները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը, տեսական և նորմատիվ հիմքերը. Ֆինանսական, բյուջետային, հարկային, վարչական իրավունքի և կառավարման տեսության գիտության մեջ ֆինանսական վերահսկողության ինստիտուտը քննարկվել և քննարկվում է տարբեր տեսանկյուններից: Խորհրդային ժամանակաշրջանում ֆինանսական վերահսկողության տեսական հիմքերը ֆինանսական իրավունքի շրջանակներում ուսումնասիրվել են Վ.Կ. Անդրեևի, Վ.Վ. Բեսչերևնիխի, Կ.Ս. Բելյևու, Լ.Կ. Վորոնովայի, Օ.Ն. Գորբունովայի, Ա.Մ. Գորևիչի, Ս.Վ. Զապոլսկու, Մ.Ի. Պիսկոտինի, Ե.Ա. Ռովինսկու, Վ.Մ. Ռոդինովայի, Է.Դ. Սկոլովայի, Ն.Ի. Խիմիչևայի, Ս.Դ. Տիպկինի և այլոց աշխատություններում: Վերջին տարիներին ֆինանսական և հարկային իրավունքի ընդհանուր համատեքստում ֆինանսական և հարկային վերահսկողության ուսումնասիրությանն են նվիրված Կ.Ս. Բելյևու, Ա.Վ. Բրիգգայինի, Դ.Վ. Վիննիցկու, Գ.Ա. Գաշինի, Ե.Յու. Գրաչովայի, Օ.Ն. Գորբունովայի, Վ.Ի. Գուրեևի, Ռ.Ֆ. Զախարովայի, Մ.Ֆ. Իվլևայի, Վ.Վ. Իլյինի, Մ.Վ. Կարասևայի, Տ.Վ. Կոնյուսովայի, Ա.Ն. Կոզիրինի, Ի.Ի. Կուչերովի, Յու.Ա. Կրոխինայի, Ն.Պ. Կուչերյավենկոյի, Ն.Ա. Կուձակովայի, Է.Մ. Տիգանկովի և այլոց աշխատանքներում:

Ֆինանսական և հարկային վերահսկողության ինստիտուտի խնդիրների լուսաբանումը հայ իրավագիտության ոլորտում իրենց տեղն են գտել Ա.Հ. Խաչատրյանի, Գ.Ա. Սուքիասյանի, Ն.Գ. Սուքիասյանի, Ա.Հ. Օսիկյանի, Ս. Մուրադյանի, Է. Շաթիրյանի ֆինանսական և հարկային իրավունքի ուսումնական դասագրքերում, մենագրություններում, գիտական հրապարակումներում, ուսումնական ձեռնարկներում և ատենախոսություններում: Ընդ որում, աշխատանքների անշնչան քանակ է նվիրված ֆինանսական վերահսկողության և կարգապահության հիմնախնդիրներին:

Ուսումնասիրության նորմատիվային իրավական բազան կազմել են Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը, ՀՀ Հարկային օրենսգիրքը, ՀՀ Վարչական իրավախախտումների մասին նոր օրենսգրքի նախագիծը, «Ազգային ժողովի կանոնակարգ», ՀՀ սահմանադրական օրենքը, ՀՀ Քաղաքացիական, ՀՀ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքերը, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Բյուջետային համակարգի մասին», ՀՀ «Կենտրոնական բանկի մասին», «Հաշվեքննիչ պալատի մասին», «ՀՀ տարածքում գործող կազմակերպություններում ստուգումների

կազմակերպման մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ կառավարության նորմատիվային բնույթի որոշումները, ՀՀ նախագահի հրամանագրերը և ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները:

Հետազոտության օբյեկտը և առարկան պայմանավորված են ֆինանսական վերահսկողության իրականացման ժամանակակից ռազմավարությամբ:

Գործնականում վերահսկողության ամբողջական պատկերացումների, բովանդակության, կառուցվածքային բաղադրամասերը կազմում են պետական այն գործառույթի դերը և նշանակությունը հասարակական, պետական կյանքում, որոնք արտացոլում են ֆինանսական վերահսկողության նպատակների, խնդիրների էությունը, սոցիալական ուղղվածությունը, որպես պետական մարմինների ամենօրյա գործունեություն:

Վերահսկողական գործընթացները դրսևորվում են ֆինանսական վերահսկողությանը հատուկ որոշակի ձևերի և մեթոդների կիրառմամբ, որոնք ֆինանսական, հարկային, բյուջետային, օրենսդրությամբ վերապահված են այդ նպատակի համար կյանքի կոչված պետական իշխանության մարմիններին, սահմանազատելով վերջիններիս իրավասությունը, լիազորությունները և գործունեության ուղղությունները, դերն ու տեղը պետական մարմինների համակարգում:

Ֆինանսական վերահսկողության հետազոտման առարկան հանդիսանում են պետության ամենօրյա ֆինանսական գործունեության ոլորտում ծագող այն հարաբերությունները, որոնք ծագում են ՀՀ ֆինանսական համակարգի ամենատարբեր ոլորտներում՝ կանխատեսելով բյուջեի, հարկերի, արժեթղթերի, արժույթի և ապահովագրության ոլորտում իրականացվող ֆինանսական վերահսկողության խնդիրների առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակները և խնդիրները. ատենախոսության նպատակը հանրապետության պետական իշխանության ոլորտում կիրառվող հիմնախնդիրների բացահայտումն է, պառլամենտական հանրապետության տնտեսական բարեփոխումների ոգուն համապատասխան, որոնք նպատակաուղղված են տնտեսվարման նորագույն նվաճումների կիրառմամբ բարձրացնելու պետական ֆինանսական համակարգի բոլոր ճյուղերի արտադրատնտեսական գործունեության արդյունավետությունը: Այս հարցադրմամբ ֆինանսական իրավունքի ճյուղի տարբեր ինստիտուտների բացահայտման և նորովի լուսաբանումների համար էական նշանակություն է ձեռք բերում ֆինանսական իրավունքի գիտության ոլորտում ձևավորված նոր հայեցակարգային դրույթները, որոնց մի մասը բաժին է ընկնում ֆինանսական վերահսկողությանը, նրա առանձին դրույթների բացահայտմանը:

Սահմանված նպատակներին հասնելու համար հեղինակի առջև դրվել են հետևյալ խնդիրները.

ա) բացահայտել հանրապետության գործադիր իշխանության գործառույթների համակարգում ֆինանսական վերահսկողությանը ներկայացվող այնպիսի առանձնահատկություններ, որոնք նպաստում են տնտեսական գործունեության ոլորտում օրինականության և ֆինանսական կարգապահության ամրապնդմանը,

բ) հետազոտել ֆինանսական վերահսկողության տնտեսական հիմքերը և դրանց նորմատիվ-իրավական կարգավորման անհրաժեշտությունը

գ) բացահայտել ֆինանսական վերահսկողության ձևերի, մեթոդների և տեսակների իրավական բովանդակության ծավալները և օրենսդրական կարգավորման բացթողումները, քննարկելով թերությունների և բացթողումների համալրման և շտկման ուղղությունները,

դ) հետազոտել պետական մարմինների կողմից ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորման արդյունավետությանն ուղղված իրավաստեղծ գործունեության արդյունքները, նրանց կողմից ֆինանսական օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունների, փոփոխությունների և դատական պրակտիկայի արդյունքների վերլուծությամբ,

ե) քննարկել ֆինանսական վերահսկողության առարկան կազմող հարկային հսկողության նորմատիվ իրավական կարգավորումները, դրանցում տեղ գտած թերությունները վերացնելու և նոր առաջարկություններով համալրելու համար,

զ) բացահայտել հարկերի և պարտադիր վճարների մասին հարկային հսկողության և վերահսկողության օրենսդրության կատարելագործման խնդիրները և հեռանկարները, մշակել կոնկրետ խորհրդատվություն օրենսդրության բացթողումների և հակասությունների վերացման համար,

է) քննարկել հարկային մարմինների վերահսկողական աշխատանքների կազմակերպարավական միջոցառումների ծրագրերը, հաշվի առնելով հարկային օրենսդրության դինամիկ փոփոխությունները, և դրանց կատարելագործման նպատակով ներկայացնել առաջարկություններ:

Ատենախոսության գիտական նորույթը. աշխատանքը հանդիսանում է հանրապետության ֆինանսական համակարգի զարգացման ժամանակակից փուլում ֆինանսական վերահսկողության նորմատիվ-իրավական կարգավորման խնդիրների համակարգված ուսումնասիրություն:

Բացահայտվել են հարկային, ֆինանսական ստուգումներ անցկացնելու կարգի նորմատիվ-իրավական կանոնակարգման բացթողումներն ու հակասությունները, մշակվել ու հիմնավորվել են այդ բնագավառում օրենսդրության կատարելագործման ուղղությամբ կատարված առաջարկությունները:

Ատենախոսության մեջ ընդհանրացվել և համակարգվել են հիմնախնդիրը բնութագրող այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են «ֆինանսական վերահսկողություն» և «հսկողություն» եզրույթները, բացահայտվել են դրանց նպատակի, խնդիրների, առարկայի, օբյեկտի, սուբյեկտների, ձևերի և տեսակների բովանդակությունները:

Գիտական նորույթի տարրեր են պարունակվում պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում:

1. Ժամանակակից ֆինանսական վերահսկողության էության հստակեցման նպատակով, աշխատանքում առաջարկվում է «Ֆինանսական վերահսկողության» հասկացության նոր սահմանում.

«Ֆինանսական վերահսկողությունը օրենսդրության պահանջների կատարման հսկողության ուղղությամբ իրավասու մարմինների ընթացակարգային գործողությունների համալիր է, ստուգվող անձի հաշվետու տվյալների, նրա ֆինանսատնտեսական գործունեության փաստացի իրավիճակի բացահայտում»:

2. «Հարկային հսկողություն» հասկացության բացահայտման նպատակով ատենախոսությունում տրվել է «հարկային հսկողություն» նոր հայեցակարգային դիրքորոշում, ըստ որի հարկային հսկողությունը սահմանվում է.

- հարկային պարտավորությունների կատարման նպատակով, օրենսդրության պահանջների կատարումն ապահովող ստուգումների անցկացման, անհրաժեշտ ուսումնասիրությունների (փորձարկումների) և փորձաքննությունների իրականացման, դրանց արդյունքների ձևակերպման և վերահսկողական միջոցառումների ձեռնարկման հետ կապված լիազոր մարմինների պաշտոնատար անձանց կոնկրետ նպատակով միավորված գործողությունների ամբողջություն:

3. Հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության, դրամական միջոցների օգտագործման նկատմամբ ֆինանսական վերահսկողության արդյունավետության կարգավորման նպատակով, առաջարկվում է ընդլայնել բանկերի և Հաշվեքննիչ պալատի լիազորությունները, իրավունք վերապահել լայնորեն կիրառելու կանխարգելիչ և պետությանը հասցված ֆինանսական վնասի վերականգնման գործառնություններ: Ատենախոսությամբ առաջարկվել է Հաշվեքննիչ պալատին իրավունք վերապահել անցկացնել վերստուգումներ և թեմատիկ ստուգումներ, Հաշվեքննիչ պալատի համապատասխան պաշտոնատար անձանց իրավունք վերապահել անարգել այցելել պետական մարմիններ, հիմնարկներ, կազմակերպություններ, բանկեր, կնքել դրամարկղերը, պահեստները, իսկ կեղծիքների, յուրացումների, չարաշահումների հայտնաբերման դեպքում առգրավել անհրաժեշտ փաստաթղթերը:

4. Կարևորելով արտագերատեսչական ֆինանսական վերահսկողության դերը պետական ֆինանսական վերահսկողության մեջ, ատենախոսությունում հիմնավորվել է, որ աուդիտորական վերահսկողությունը համարվում է ֆինանսական վերահսկողության առավել արդյունավետ կազմակերպման տեսակներից մեկը: «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն, Աուդիտը կազմակերպությունների ֆինանսական հաշիվների և ֆինանսական հաշվետվություններ ներառող փաստաթղթերում տեղեկատվության անկախ ստուգումն է, որի արդյունքում տրվում է աուդիտորական եզրակացություն: Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն, ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է հնարավորություն ընձեռել աուդիտորին կարծիք հայտնելու, թե ֆինանսական հաշվետվությունները, կազմված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Հաշվի առնելով, որ աուդիտի ընթացքում աուդիտորը եզրահանգումներ կատարելու նպատակով ձեռք է բերում համապատասխան ապացույցներ՝ աուդիտորական կարծիքի ձևավորման համար հիմք հանդիսացող եզրահանգումներ կատարելու նպատակով, առաջարկվում է աուդիտորական կարծիքը դիտարկել հարկային մարմիններին ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության և օրինականության ապահովման իրավական երաշխիք: Հաշվի առնելով վերոգրյալը ատենախոսությունում առաջարկվում է ՀՀ «Հարկային օրենսգրքում» սահմանել, որ ՀՀ-ում հաշվառված, ընդհանուր հարկման դաշտում գործող բոլոր կազմակերպություն-

ների ֆինանսական և հարկային հաշվետվությունները իրավասու պետական մարմիններին ներկայացվեն առդիտորական եզրակացության առկայությամբ:

5. Հաշվապահական վերահսկողությունը հանդիսանում է ներտնտեսական վերահսկողության անքակտելի մասը: «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն, Հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ, դրամական արտահայտությամբ, տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է, որն իրականացնում է հաշվապահական ծառայության ղեկավարը՝ գլխավոր հաշվապահը: Ատենախոսությունում հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ ստվերային տնտեսության դեմ արդյունավետ պայքարելու համար, անհրաժեշտ առևտրային կազմակերպությունների գլխավոր հաշվապահի պաշտոնում աշխատելու իրավունք տրամադրել միայն համապատասխան լիազոր պետական մարմնի կողմից որակավորված (լիցենզավորված) ֆիզիկական անձին: Հիշատակված օրենքում անհրաժեշտ է սահմանել, որ հարկային իրավախախտումներ թույլ տալու դեպքում գլխավոր հաշվապահը ենթարկվում է պատասխանատվության: Նրա նկատմամբ կիրառվում են որակավորումից և որոշակի ժամկետով գլխավոր հաշվապահի պաշտոնում աշխատելու իրավունքից զրկելու պատասխանատվության միջոցներ:

6. Ատենախոսությունում հիմնավորվել է այն կարծիքը, որ հանրային վերահսկողությունը համրվում է ֆինանսական վերահսկողության իրականացման ամենաարդյունավետ տեսակներից մեկը: Անհերքելի է այն պնդումը, որ ֆինանսական վերահսկողության վերաբերյալ հավաստիացման բարձր մակարդակ կարելի է ապահովել պետական բյուջեի եկամտային և ծախսային մասի վերահսկման համաժամանակյա կիրառման դեպքում: Հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեի եկամուտների գրեթե ամբողջ մասը կազմում են հարկային եկամուտները, իսկ դրանք գոյանում են սպառումից, հետևաբար սպառման ամբողջական վերահսկման դեպքում կարելի է վերահսկել ամբողջ հարկվող շրջանառությունը, իսկ հարկվող շրջանառության ամբողջական հայտարարագրումն է, որ հանգեցնում է հարկերի ամբողջական հավաքագրման: Ուստի գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ է ներդնել հարկվող շրջանառության հասարակական վերահսկողության համակարգ, հասարակությանը շահագրգռելով առևտրային կազմակերպություններից պահանջել վաճառքների հիմնավորման փաստաթղթերը, հետագայում այդ պաստաթղթերի որոշակի տոկոսի չափով փոխհատուցում ստանալու պայմանով: Անհրաժեշտ է իրավական ակտերով ամրագրել և իրավունք վերապահել ապրանքների, ծառայությունների վերջնական սպառողներին հարկային տարվա ավարտից հետո, իրենց սպառումների որոշակի տոկոսի չափով ստանան պետական փոխհատուցում, սպառման հիմնավորող փաստաթղթերը հարկային պարմիններին ներկայացնելու դեպքում, ինչը համոզված ենք, որ առիթ կհանդիսանա բնակչության կողմից ամբողջական սպառման փաստաթղթավորման պահանջի վերահսկման, որը պնդում ենք որ կհանգեցնի հարկվող շրջանառության

ամբողջական հայտարարագրման, ինչն իր հերթին կհանգեցնի հարկային եկամուտների հավաքագրման:

7. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի համաձայն Ներքին աուդիտը հանդիսանում է անկախ և օբյեկտիվ հավաստագրման գործառույթ, որն ուղղված է կազմակերպության գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Ներքին աուդիտը՝ ի թիվս այլ սկզբունքների, իրականացվում է «անկախություն» և «օբյեկտիվություն» սկզբունքների համաձայն:

«Հանրային հատվածի ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ ներքին աուդիտի համակարգը գործում է կազմակերպության ղեկավարի ենթակայությամբ: Ատենախոսությունում հիմնավորվել է, որ ներկայիս գործող համակարգը, որտեղ նեքին աուդիտորը աշխատանքի է նշանակվում կազմակերպության ղեկավարի կողմից և աշխատում է նրա ուղիղ ենթակայության տակ, կանկախ է դնում աուդիտորի գործունեության անկախությունը և օբյեկտիվությունը, ուստի անհրաժեշտ է վերանայել այս մոտեցումը և այդ լիազորությունը վերապահել այլ անձանց:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ ուսումնասիրության ընթացքում կատարված եզրահանգումներն ու դրանց հիման վրա ձևակերպված առաջարկությունները կոչված են ապահովելու ֆինանսական վերահսկողության նորմատիվաիրավական կանոնակարգման և կատարելագործման գիտական մակարդակի բարձրացումը, նպաստելու ՀՀ ֆինանսական, բյուջետային, հարկային և բանկային օրենսդրության համապատասխան իրավական ակտերի մշակման ժամանակ գիտականորեն հիմնավորված մոտեցման ձևավորմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ

- ուսումնասիրության հիման վրա արված եզրահանգումներն ու առաջարկությունները նպաստակ ունեն նպաստել պետության ֆինանսական գործունեության ոլորտում օրենսդրության կատարելագործմանը,
- աշխատանքում պարունակվող նյութը վերահսկող մարմինների համար կարող է օգտագործվել որպես մեթոդական ուղեցույց, ինչպես նաև ուսումնական ձեռնարկ,

Ատենախոսության արդյունքների գործնական ներդրումը պետք է նպաստի ֆինանսական վերահսկողության անցկացվող միջոցառումների արդյունավետության բարձրացմանը, վերահսկող մարմինների կողմից տնտեսական օրենսդրության հնարավոր խախտումների ժամանակին բացահայտմանը և հետևանքների վերացմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումն իրականացվել է ատենախոսության հիմնական դրույթները մեկ մենագրությունում և 7 գիտական հոդվածներում հրապարակելու, կատարված ուսումնասիրության արդյունքները տարածքային հարկային տեսչությունների, ՀՀ համայնքների և «ԳԱՐԱՆՏ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ-ի ֆինանսական ստուգումների կազմակերպման ընթացքում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված

գրականության ցանից: Առաջին և երկրորդ գլուխները կազմված են երկուական ենթագլուխներից, իսկ երրորդ գլխում ներառված են երեք ենթագլուխներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է հետազոտության թեմայի արդիականությունն ու գիտական մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության բովանդակությունը:

Ատենախոսության **առաջին գլուխը** կրում է «Տնտեսական և ֆինանսական վերահսկողության հետազոտման մեթոդաբանության հիմնախնդիրները» վերտառությունը, որը բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը նվիրված է «Վերահսկողությունը որպես ժամանակակից տնտեսության ղեկավարման և կառավարման գործառույթ, դրա իրականացման տնտեսական և իրավական հիմքերի» հետազոտմանը: Սույն ենթագլխում բացահայտված են ֆինանսական վերահսկողության հիմնական խնդիրները, նպատակը, գործառույթները, ֆինանսական վերահսկողությունը ներառող հիմնական օղակները՝ պետական և մասնավոր ընկերությունների ֆինանսները, հարկերը և հարկային համակարգը, պետական բյուջեն և բյուջետային համակարգը, ապահովագրական ֆոնդերը, կենսաթոշակային ապահովության ֆոնդերը, վարկային ֆոնդերը և բանկային համակարգը: Ատենախոսությունում քննարկվում է պետության ֆինանսական ռեսուրսների բացահայտման ու դրանց ավելացման հնարավորությունները, պետական բյուջեի եկամուտների բաշխման արդյունավետ կազմակերպման և այդ ռեսուրսների նպատակային օգտագործման և պահպանման հնարավորությունները, ֆինանսական ռեսուրսների և ծախսերի միջև հաշվեկշռվածության ապահովման հնարավորությունները, որոնք բացահայտված են ՀՀ սոցիալ-տնտեսական բարեփոխումների համակարգված ծրագրային դրույթների մեթոդաբանությամբ: Ատենախոսությունում առաջին անգամ ներկայացվում է ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորման նոր հայեցակարգը, ըստ որի վերահսկողությունը գործադիր իշխանության գործադիր-կարգադիրչ գործունեության իրավական ձև է: Այն իր բովանդակությամբ պետական է, իրականացվում է պետության անունից, պետական իշխանության հարկդրանքի կիրառմամբ:

Հետազոտության **առաջին գլխի երկրորդ ենթագլուխը** կրում է «Ֆինանսական վերահսկողության և հսկողության արդի հայեցակարգերը, դրանց սահմանադրական հիմքերի առանձնահատկությունները» վերնագիրը, որտեղ խնդիր է դրվել գիտական հետազոտությունների հիման վրա ձևավորել ֆինանսական «վերահսկողություն» և «հսկողություն» նոր իրավական հայեցակարգ՝ վերջիններս սահմանազատելով ըստ իրավական առանձնահատկությունների: Հեղինակված հայեցակարգը, որպես գիտական նորույթ ներկայացվում է այն առանձնահատկություններով, որի համաձայն վերահսկողություն

ավելի լայն և ծավալուն գործունեություն է, որն իրականացվում է վերադաս մարմինների կողմից ստորադաս մարմինների, ենթակառուցվածքային ստորաբաժանումների և դրանց պաշտոնատար անձանց նկատմամբ վերջիններիս կողմից առաջադրված խնդիրների իրագործման կապակցությամբ և նպատակաուղղված է օրինականության ապահովմանը, խախտումների կանխմանը, մեղավոր անձանց նկատմամբ պետական հարկադրանքի միջոցների կիրառմանը: Որպես առանձնահատկություն վերահսկողությունը ներառում է կառավարման ճյուղային մարմինների լիազորությունների իրագործման այն գործընթացները, որոնք ուղղված են միևնույն համակարգի և կազմակերպչորեն տվյալ մարմնի ենթակա սուբյեկտների գործունեության օրինականության ապահովմանը:

Հսկողության իրավական հիմնական առանձնահատկությունն այն է, որ բացառվում է գործունեության մասնակիցներից մեկի՝ մյուս մասնակցին ենթարկվելու հնարավորությունը, ինչը չի կարելի պնդել վերահսկողության պարագայում:

Աշխատանքի երկրորդ գլուխը կրում է «**Ֆինանսական վերահսկողության իրականացման ձևերը և մեթոդները**» անվանումը, որը բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը կրում է «**Ֆինանսական վերահսկողության ձևերը և տեսակները, դրանց սահմանազատման մեթոդաբանական առանձնահատկությունները**» վերտառությունը: Ենթագլխում քննարկվել են ֆինանսական վերահսկողության համապետական, ներգերատեսչական, արտագերատեսչական, ներտնտեսական, հասարակական, առօրյա տեսակները, ընդգծվել են սրանց իրավակազմակերպական առանձնահատկությունները: **Քննարկվել են նախնական, ընթացիկ և հետագա հսկողության ձևերը, դրանց արդյունավետությունը:** Հետազոտվել և բացահայտվել են ֆինանսական վերահսկողության գործնական իրականացման այնպիսի ձևեր, ինչպիսիք են նորմատիվ իրավական ակտերի և այլ փաստաթղթերի պահանջների վերստուգումը, ստուգումը, հսկումը: Որպես գիտական նորույթներ հեղինակված են յուրաքանչյուրի իրավական բովանդակությունը և առանձնահատկությունները, առաջարկվել է վերջիններիս արտացոլել «պետական վերահսկողության մասին» ապագա մշակվելիք օրենքի տեքստում: Ատենախոսությունում այն հայեցակարգն է ամրագրված, որ **ֆինանսական վերահսկողության հիմնական իրավակազմակերպական ձև են հանդիսանում ստուգումները**, որոնք թույլ են տալիս առավելապես ամբողջությամբ հետևել ֆինանսական պարտավորությունների ժամանակին, ամբողջական և ճիշտ կատարմանը: Ֆինանսական վերահսկողության մնացած ձևերը օգտագործվում են որպես ֆինանսական իրավախախտումների բացահայտմանն ուղղված ապացույցների հավաքման օժանդակ մեթոդներ:

Գիտական հետազոտության այս շարադրանքում առաջին անգամ որպես նորույթ հեղինակված է ֆինանսական ստուգման հասկացությունը, որի բովանդակությունը և իրավական առանձնահատկությունների հաշվառմամբ առաջարկվում է ՀՀ «Հարկային օրենսգրքի» 335-րդ հոդվածը վերամշակել այն հաշվով, որ պարզեցված իմաստով, ֆինանսական ստուգումը օրենքների հիման վրա, ֆինանսական հսկողություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձի գործողությունն է, որն ուղղված է ֆինանսական պարտավորությունների կատարման

ուղղությամբ ներկայացված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատությանը, տնտեսական գործունեության հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, հսկողություն իրականացնող լիազոր մարմինների կողմից վերահսկվող օրենսդրության պահանջների համապատասխանության հանգամանքները պարզելուն, ինչպես նաև այդ պահանջների խախտումների նախագգուշացմանը և կանխմանը:

Ատենախոսության **երկրորդ գլխի երկրորդ ենթաբաժնում** լուսաբանված են «**Ֆինանսական վերահսկողության մեթոդները, որպես վերահսկողության գործնական դրսևորման արդյունավետության ապահովման միջոցի**» իրավական հիմնախնդիրները: Ենթաբաժնում տարբեր իրարամերժ իրավական հայեցակարգերի հետազոտությունների և մեկնաբանությունների հիման վրա **հեղինակվել է այն կարծիքը, որ ֆինանսական վերահսկողության մեթոդների տակ հասկացվում է դրա իրականացման իրավական հնարքների, ձևերի, եղանակների ամբողջությունը:**

Հետազոտությունների արդյունքների հիման վրա ֆինանսական իրավունքի գիտության տեսական և գործնական կիրառման նպատակով առաջին անգամ վերահսկողության մեթոդները դասակարգվել են.

- **վերահսկողության օբյեկտների ուսումնասիրման համընդհանուր գիտական մեթոդաբանական հնարքներ** (վերլուծություն, սինթեզ, մակաձում, արտածում, համանմանություն, մաթեմատիկական մոդելավորում, վերացականացում, վիճակագրական մեթոդներ, տրամաբանական համեմատական և այլ մեթոդներ),

- **էմպիրիկ մեթոդական հնարքներ** (գույքագրում, աշխատանքների վերահսկիչ չափումներ, ֆորմալ և թվաբանական ստուգումներ, հակընդդեմ ստուգում, հետադարձ հաշվարկի եղանակ, միատեսակ փաստերի համադրման մեթոդ, տրամաբանական ստուգում, սկանավորում, գրավոր և բանավոր հարցումներ, վկաների հարցաքննություն, փաստաթղթերի ստուգում, առարկաների և փաստաթղթերի ուսումնասիրում, տարածքների և առարկաների զննում, փորձաքննություն և այլն),

- **առաջարկվում է նաև տնտեսական գիտությունների առանձնահատուկ միջոցներ** (տնտեսական վերլուծության միջոցներ, տնտեսական-մաթեմատիկական մեթոդներ, հավանականությունների և մաթեմատիկական վիճակագրության տեսության մեթոդներ և այլն):

Հիշատակված ֆինանսական վերահսկողության ձևերի, եղանակների, մեթոդների գիտական հետազոտությունների արդյունքների հիման վրա ատենախոսությունում առաջին անգամ հիմնավորվում է վերահսկողության նոր հայեցակարգի ձևավորման անհրաժեշտությունը, որի հեղինակված տեսական և գործնական նշանակության դրույթները ըստ գործոնների ներկայացված է հետևյալ բովանդակությամբ: Այսպես՝ կախված հսկողության իրականացման ժամկետներից, ֆինանսական վերահսկողությունը, ինչպես նաև հսկողությունը կարելի է դասակարգել ա) օպերատիվի և պարբերականի, բ) վերահսկողության և հսկողության իրականացման աղբյուրների տեսանկյունից՝ փաստաթղթային և փաստացի, գ) կախված վերահսկողության և հսկողական միջոցառումների բնույթից՝ պլանայինի և հանկարծակիի (արտապլանայինի), դ) փաստաթղթային

ստուգման մեթոդի տեսանկյունից ընտրանքայինի և համատարածի, ե) կախված ստուգման ենթակա օբյեկտի ծավալից՝ համալիրի և թեմատիկի, գ) կախված հսկողության ժամկետներից՝ նախնականի, ընթացիկի, հետագայի:

Աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է «Ֆինանսական վերահսկողության իրականացնող մարմինների, դրանց կարգավիճակի առանձնահատկությունների» բացահայտումներին, որոնց բովանդակությունը ամփոփված է երեք ենթագլուխներում:

Առաջին ենթագլխում «Ֆինանսական վերահսկողության առանձնահատկություններն օրենսդիր մարմնի իրավաստեղծ գործունեության ոլորտում» բացահայտված են ՀՀ Ազգային ժողովի, Հաշվեքննիչ պալատի վերահսկողական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ օրենքների, իրավական ակտերի բացակայության, թերի լինելու, միմյանց հակասող իրավական ակտեր ընդունելու պատճառով ֆինանսական վերահսկողության իրականացման ցածր մակարդակի հետևանքները: Առաջարկվել է իրավական ակտերի փոփոխություն իրականացնել, որով Հաշվեքննիչ պալատին իրավունք վերապահել անցկացնել վերստուգումներ և թեմատիկ ստուգումներ, որոնց արդյունքների մասին պետք է տեղյակ պահել ՀՀ ԱԺ-ին: Առաջարկվել է Հաշվեքննիչ պալատի մասնաճյուղեր ստեղծել տեղերում, որոնց առկայությունը կուժեղացնի դրամական միջոցների օգտագործման նկատմամբ ֆինանսական վերահսկողությունը: Անհրաժեշտ ենք համարել, որ Հաշվեքննիչ պալատին իրավունք վերապահել ստուգվող կազմակերպությունների ղեկավարությանը տալ կատարման համար պարտադիր հանձնարարականներ, որոնք կարող են բողոքարկվել դատական կարգով: Առաջարկվել է Հաշվեքննիչ պալատին իրավունք վերապահել անարգել այցելել պետական մարմիններ, հիմնարկներ, կազմակերպություններ, բանկեր, կնքել պահեստները, կեղծիքների, յուրացումների, չարաշահումների հայտնաբերման դեպքում ազդարկել անհրաժեշտ փաստաթղթերը: Ատենախոսը արձանագրել է, որ ՀՀ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովների գործունեությունն ավելի շատ տեղեկատվական բնույթ ունի (Քննիչ հանձնաժողով): Առաջարկվել է այսպիսի հանձնաժողովների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով, վերջիններիս վերապահել ավելի լայն վերահսկողական լիազորություններ, ինչի արդյունքում հանձնաժողովների գործունեությունը կհանգեցնի շոշափելի արդյունքների, ինչն էլ իր հերթին կնպաստի ֆինանսական վերահսկողության արդյունավետության բարձրացմանը: Այս հանձնաժողովը(ները), համագործակցելով իրավապահ մարմինների հետ, իրենք ևս որոշակի գործնական քայլեր պետք է ձեռնարկեն ֆինանսական և այլ իրավախախտումների ի հայտ բերման և հարկադրանքի միջոցներ կիրառելու ուղղությամբ:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում քննարկվել է «ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող ֆինանսական վերահսկողության առանձնահատկությունները գործադիր իշխանության իրականացման ոլորտում» հիմնախնդիրը: Ատենախոսությունում քննարկվել են ՀՀ Ֆինանսների նախարարության, մասնավորապես Բյուջետային վերահսկողության վարչության, Գանձապետարանի, Պետական եկամուտների կոմիտեի, Վարչա-

պետի վերահսկողական ծառայության և այլ մարմինների վերահսկողական գործառույթները:

Հանրապետության հարկային օրենսդրության, առավել ևս հարկային օրենսգրքի կառուցվածքի և բովանդակության ուսումնասիրությունները վկայում են, որ վերահսկողությունը որպես գործունեության մեթոդ անտեսվել և շրջանցվել է այն դեպքում, երբ ՊԵԿ-ն, որպես գործադիր իշխանության կառավարման մարմին, իր համակարգի հարկային և մաքսային ծառայությունների, նրանց ստորին մարմինների գործունեության նկատմամբ իրականացնում է ամենօրյա վերահսկողություն՝ ապահովելով սահմանադրությամբ ամրագրված օրինականության սկզբունքի պահանջները:

Զարմանալիորեն գործող հարկային օրենսգրքի երկրորդ գլխում անգամ, որտեղ խոսվում է օրենսգրքում կիրառվող հիմնական հասկացությունների մասին (հոդ. 4) «**հարկային վերահսկողություն»** հիշատակում **չկա**: Հարկային վերահսկողության սահմանափակ կիրառումների ենք հանդիպում ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11-ի N702-2 որոշմամբ հաստատված «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի» կանոնադրությունում, որտեղ առանձին գործառնություններ են իրականացվում ՊԵԿ վերահսկողությամբ: Իրավական բովանդակության տեսանկյունից հարկային մարմինների իրավասության իրացման հիմնական բովանդակությունը անկասկած հսկողության իրականացումն է, առանց որի անհնար է պետական բյուջեի գանձարանային (ֆիսկալ) գործառույթի ապահովումը, բյուջեի ամրագրված եկամուտների հավաքագրումը:

Ետագոտության արդյունքների գնահատմամբ արտենախոսությունում **առաջին անգամ տրվել է հարկային վերահսկողության վերաբերյալ հեղինակային սահմանում**: «Հարկային վերահսկողության էությունը վերահսկողության ձևերի ու մեթոդների կիրառմամբ իրավասու պետական մարմինների կառավարչական գործունեությունն է վերահսկվող սուբյեկտների կողմից հարկային օրենսդրության նորմերի կատարումը վերահսկելու ուղղությամբ»: Ատենախոսությունում հարկային վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվել է ընդունել «Վարչապետի վերահսկողության ծառայության մասին» օրենք և հարկային և մաքսային ծառայության գործունեությունը կարգավորող մի շարք իրավական ակտերում իրականացնել փոփոխություններ և լրացումներ: Առաջարկվել է նախագծվող օրենքներում ամրագրել հարկային ստուգումների հետևյալ դասակարգումը՝

ա) ըստ իրականացման վայրի՝ **ներքին և արտաքին**,

բ) ըստ պարբերականության՝ **սկզբնական և լրացուցիչ**,

գ) ըստ իրականացման՝ **համատարած և ընտրանքային**,

դ) ըստ ընդգրկման աստիճանի՝ **ֆինանսատնտեսական գործունեության**

ստուգումներ:

Ատենախոսության երրորդ գլխի վերջին ենթագլուխը կրում է «**Ֆինանսական վերահսկողություն իրականացնող այլ մարմինները, դրանց իրավասությունները**» վերնագիրը: Ենթագլխում քննարկվել են բանկային, արժույթային, ներգերատեսչական, աուդիտորական և հասարակական վերահսկողության իրականացման ձևերը և տեսակները, վերահսկողություն իրականացնող մարմինների գործառույթները: Ատենախոսությունում բանկային համակարգի

կայունությունն ապահովելու նպատակով Կենտրոնական բանկը պետք է լիազորված լինի արտակարգ դեպքերում մինչև վեց ամիս տևողությամբ սահմանել հատուկ տնտեսական նորմատիվներ: Աշխատանքում հիմնավորվել է հաշվապահական հաշվառման, աուդիտորական վերահսկողության իրավակարգավորումների կարևորությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների ամբողջ ծավալով հավաքագրման և նոր եկամուտների բացահայտման գործում: Հեղինակի կողմից պետական բյուջեի եկամուտների հավաքագրման արդյունավետության և հավաստիության համար առաջարկվել է ՀՀ տնտեսական օրենսդրությունը համալրել «հասարակական վերահսկողության» նոր համակարգի ներդրմամբ:

Եզրակացության մեջ ամփոփվել են կատարված հետազոտության արդյունքները և ներկայացվել մի շարք եզրահանգումներ ու առաջարկություններ, որոնք ուղղված են ինչպես ֆինանսական իրավունքի գիտության տեսական նոր հայեցակարգերի ձևավորմանը, այնպես էլ ՀՀ գործող ֆինանսական համակարգի առանձին ոլորտների կարգավորմանն ուղղված ֆինանսական վերահսկողությանը և հսկողությանը, նոր օրենսդրության մշակմանը և կատարելագործմանը:

1. Բացահայտումներից պարզվում է, որ ՀՀ գործող օրենսդրությամբ դեռևս պատշաճ կերպով կարգավորված չեն ֆինանսական վերահսկողության և հսկողության ոլորտում իրավապահ մարմինների համագործակցությունը: Հիշատակված վերլուծությունները վկայում են ֆինանսական վերահսկողության մարմինների գործողությունների ամենամեծ բացթողումներից մեկը, ֆինանսական վերահսկողության ոլորտում վերջիններիս, ինչպես իրավասության շրջանակների, այնպես էլ լիազորությունների անորոշությունն է, որոնք տարանջատված չեն: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցների և նյութական արժեքների օգտագործման նկատմամբ ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի, ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության, հարկային և մաքսային մարմինների, նախարարությունների և գերատեսչությունների կազմում գործող ներքին աուդիտի լիազորությունները ստուգումների և վերստուգումների ընթացքում, որպես կանոն համընկնում են: Այս իրողությունն առաջացնում է որոշակի թյուրըմբռնում: Ֆինանսական վերահսկողության մարմինների մեծ մասն ունի յուրահատուկ գործառույթներ և այս առումով տարբեր մարմինների գործունեության ոլորտները սահմանափակված են:

2. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի իմաստով, բյուջետային միջոցների արդյունավետ և տնտեսվար օգտագործման սկզբունքը նշանակում է նվազագույն ծավալի միջոցների օգտագործմամբ առաջադրված արդյունքների ձեռքբերում: Այս սկզբունքը համահունչ է տնտեսագիտական և իրավաբանական գրականության մեջ «արդյունավետություն» հասկացության օրենսդրական սահմանմանը և արտահայտում է ստացված արդյունքների և ծախսված միջոցների հարաբերակցությունը: Այս հիմնախնդրի լուծումը և արդյունավետության վերահսկողության իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը պահանջում են բյուջետային գործընթացի կազմակերպման կատարելագործում,

որի առանցքը բյուջետային նպատակաուղղվածությունն է:

3. Գործնականում ֆինանսական վերահսկողության մարմինները պետք է կանխատեսեն և ուշադրության կենտրոնում պահեն հնարավոր ռիսկերի առկայության, դրանց ծագման պատճառների, գործունեության ընթացքում հիմնախնդիրների վերահսկողության ճանապարհով վերացման արդյունավետությունը: Այդ նպատակին պետք է ծառայեն վերահսկողության ձևերի, մեթոդների, եղանակների կատարելագործումն ու արդիականացումը, վերահսկողության օրենսդրաիրավական դաշտի դինամիկ բարեփոխումները:

4. Ժամանակակից պետություններում ֆինանսական վերահսկողության էությունը ֆինանսական համակարգի օրինականության ապահովումն է, որն արտահայտվում է ֆինանսական օրենսդրության խախտումների օպերատիվ բացահայտումներով: Դրա արդյունավետությունը կապված է իրավական ակտերում յուրաքանչյուր խախտման բովանդակության ճշգրիտ ձևակերպման հետ: Եթե բյուջետային միջոցների նպատակային օգտագործման հասկացությունը բավարար հստակությամբ սահմանված է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, ապա, ինչպես վերը նշվել էր վերահսկողության ճանապարհով հայտնաբերված խախտումների կապակցությամբ պատասխանատվության կիրառման իրավակարգավորումների անբավարարության պատճառով արդյունավետությունը աննկատ է, **որի պահանջով օրվա հրամայականն է «Բյուջետային օրենսգրքի» ընդունման անհրաժեշտությունը:**

5. Բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով, իրավական ակտերում անհրաժեշտ է ամրագրել որոշակի նորմատիվային չափորոշիչներ, որոնց կիրառմամբ վերահսկողության արդյունքում հնարավոր կլինի կատարել եզրահանգումներ և մշակել առաջարկություններ: Որպես ընդգծված և ֆինանսաիրավական ակտերում ամրագրված չափորոշիչներ կարող են կիրառվել՝

ա) չափորոշիչներ, որոնք բնութագրում են ստուգվող սուբյեկտների տնտեսական գործունեության արդյունքները (ծախսերի ցուցանիշները՝ որոշակի արդյունքների ձեռքբերման նպատակով ֆինանսական, աշխատանքային և նյութական ռեսուրսները),

բ) չափորոշիչներ, որոնք արտացոլում, են տնտեսվարող սուբյեկտների գործունեության սոցիալական արդյունքները (կատարված ծախսերի անմիջական արդյունքների ցուցանիշները):

6. Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման արդի փուլում ակնառու է վերահսկողության առարկայի փոփոխությունը: Եթե ավանդաբար ստուգման առարկա, որպես կանոն, ընդունվում էին նպատակային ծրագրերի իրականացման համար հատկացվող ֆինանսական միջոցները, դրանց նպատակային և արդյունավետ օգտագործումը, ատենախոսությունում խնդիր է դրվել, որպես վերահսկողության սուբյեկտի ներգործության օբյեկտ, սահմանել վերահսկվող մարմինների գործունեությունը այդ նպատակային ծրագրերի իրականացման ուղղությամբ, այսինքն՝ յուրաքանչյուր ծրագրային միջոցառման կատարումը, միջոցառման պատվիրատուի և կատարողի միջև պայմանագրերի (համաձայնագրերի) կնքումը, գնումների գործընթացներն ու մրցույթների անցկացումը տվյալ բյուջետային տարում՝ ըստ նպատակային ծրագրերի

Ֆինանսական միջոցների բաշխումը, փաստացի ֆինանսավորումը և այլ գործընթացների վերահսկողությունը կարգավորող իրավական ակտերի շարադրանքում դիտարկել որպես օբյեկտի վրա ներգործության համալիր գործողություններ:

7. Ֆինանսական վերահսկողության կատարելագործումը պետք է իրականացնել համակարգային մոտեցմամբ: Արդյունավետ վերահսկողական գործիքակազմ պետք է կիրառել բյուջեի միաժամանակ և՛ եկամտային, և՛ ծախսային մասի նկատմամբ, որոնք հնարավորություն կստեղծեն նոր եկամտային ուղիների բացահայտման և ծախսերի օպտիմալացման: Մասնավորապես, անհրաժեշտ է օրենսդրությամբ ամրագրել, որ ՀՀ-ում հաշվառված, **ընդհանուր հարկման դաշտում գործող բոլոր կազմակերպությունների ֆինանսական և հարկային հաշվետվություններն իրավասու պետական մարմիններին պետք է ներկայացվեն աուդիտորական եզրակացության առկայությամբ:**

8. Ատենախոսությունում վերլուծությունների արդյունքների հիման վրա հեղինակը հանգել է այն եզրակացության, որ հաշվապահական վերահսկողությունը պետք է դառնա ֆինանսական վերահսկողության առանցքը՝ բացելով նոր հեռանկարներ սովորաբար տնտեսության դեմ արդյունավետ պայքարի համար: Կազմակերպությունների գլխավոր հաշվապահների համար որակավորման պահանջի սահմանումը և աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության միջոցների կիրառումը անխուսափելիորեն կհանգեցնի կազմակերպությունների սովորաբար շրջանառության հայտարարագրման, որն իր հերթին կհանգեցնի պետական հարկերի ամբողջական հավաքագրման:

9. Հետազոտության արդյունքների հիման վրա եզրահանգվում է, որ ֆինանսական վերահսկողության արդիականացումը ենթադրում է աուդիտորական ծառայությունների որակի բարձրացում: Առաջարկվել է բացի գործող ստանդարտներից, աուդիտորական կազմակերպությունների գործունեությունը բնութագրող լրացուցիչ չափանիշների մշակման հարցերը: Ընդգծվում է, որ մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը կնպաստեն նաև այնպիսի գործոնները, ինչպիսիք են անորակ աուդիտի իրականացումից հասցված վնասի գնահատման մեթոդների մշակումը, աուդիտորների որակավորման բարձրացման նպատակով կիրառվող մասնագիտական պատրաստման համակարգի արդիականացումը: Հայաստանում աուդիտորական վերահսկողության կատարելագործման կարևոր ուղղություններից պետք է դառնա անցկացվող աուդիտի բնույթի վերանայումը: Աուդիտի արդյունքում պետք է ոչ միայն ներկայացվի եզրակացություններ հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ, այլև դրանցով օգտվողներին տրամադրվի տեղեկատվություն տնտեսական սուբյեկտի իրական ֆինանսական վիճակի մասին: Հանրային ֆինանսական վերահսկողության մարմինների համագործակցության խորացումը աուդիտորական կազմակերպությունների հետ կպահանջի նման համագործակցության ուղղությունների ընդլայնման և ձևաչափի հստակ ամրագրում: Առավել կարևորությամբ առանձնանում են նաև աուդիտորական ծառայությունների շուկայի բոլոր մասնակիցների շահերի համաձայնեցման նպատակով դրա կարգավորման այնպիսի արդյունավետ մեխանիզմի մշակումն ու կիրառումը, որը ոչ միայն կպարու-

նակի վարչական ու ֆինանսական ազդեցության միջոցներ, այլև հաշվի կառնի սահմանված, սակայն այսօր գրեթե չկիրառվող էթիկայի կանոնները:

10. Ժամանակակից պայմաններում լուծում պահանջող խնդիրների շարքում է << «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքով ամրագրված **ներտնտեսական ֆինանսական վերահսկողության** օրենսդրական ապահովվածությունը, որի ներկայիս վիճակը թույլ է տալիս խոսել միայն դրա ստեղծման մասին, իսկ կայացման և զարգացման հարցերը իրավակարգավորումներ չունեն: Առաջարկվում է օրենսդրորեն ամրագրել ներքին վերահսկողության ծառայությունների գործունեության հիմքերը և սահմանել նրանց և ֆինանսական վերահսկողություն իրականացնող այլ մարմինների համագործակցության եղանակներն ու հիմքերը: Ներտնտեսական վերահսկողության կատարելագործման հիմնական ուղղությունը պետք է համարել դրա առավել ռացիոնալ և ընդունելի ձևերի և մեթոդների մշակումն ու իրագործումը, որոնք արձանագրելով հաշվապահական հաշվառման մասին օրենսդրությամբ, կնպաստեն պաշտոնատար անձանց կողմից թույլ տրվող չարաշահումների և օրինականության խախտումների նվազեցմանը, ֆինանսական ռեսուրսների պահպանմանն ու նպատակային օգտագործմանը:

11. Ֆինանսական վերահսկողության համակարգի անբաժանելի մասն է կազմում նաև **հասարակական վերահսկողությունը**, ուստի՝ վերահսկողական մեխանիզմների կատարելագործման հիմնախնդիրները հավասար չափով վերաբերում են նաև վերահսկողության այս ձևին: Ներկայումս հասարակական վերահսկողության կատարելագործմանը կարող են նպաստել հետևյալ միջոցները՝ ոչ միայն կազմակերպությունների (հասարակական կազմակերպությունների, կուսակցությունների, միավորումների և այլոց) գործունեության առանձին բնագավառների ավելի հստակ կանոնակարգումը, մասնավորապես, իրենց գործունեության արդյունքների մասին տեղեկատվության տրամադրման մասով: Վերջինս ենթադրում է այդ կազմակերպությունների հաշվետվությունները հրատարակող զանգվածային լրատվական միջոցների ցուցակի որոշում, հաշվետվությունները չհրատարակելուց խուսափելու համար պատասխանատվության միջոցների սահմանում, որպես պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, քաղաքական և այլ կազմակերպությունների գործունեության նկատմամբ վերահսկողության իրավունքի իրագործման միջոց՝ պետական տեղեկատվության միջոցների հասանելիության վերաբերյալ դրույթների օրենսդրությամբ ամրագրում (բացի սահմանափակ հասանելիության ենթակա տեղեկատվությունից), կոնկրետ վերահսկողական գործողություններին հասարակության մասնակցության համար հնարավորությունների ընձեռում:

Գործող ֆինանսական վերահսկողության կատարելագործման և գործնական կիրառման արդյունավետության բարձրացման տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ է ներդնել «Հարկվող շրջանառության հասարակական վերահսկողության համակարգի» կարգավորման մասին օրենք, որը սպառողներին կշահագրգռի առևտրային կազմակերպություններից պահանջել վաճառքների հիմնավորման փաստաթղթերը, հետագայում այդ փաստաթղթերի որոշակի տոկոսի չափով փոխհատուցում ստանալու պայմանով: Անհրաժեշտ է, որ ֆինանսական վերահսկողության իրավակարգավորումները

կարողանան իրավական ակտերով ամրագրել և իրավունք վերապահել ապրանքների, ծառայությունների վերջնական սպառողներին հարկային տարվա պետարտից հետո, իրենց սպառումների որոշակի տոկոսի չափով ստանան պետական փոփոխությունում, սպառման հիմնավորող փաստաթղթերը հարկային մարմինների ներկայացնելու դեպքում:

12. Գիտական վերլուծությունների արդյունքով արդյունավետ պետական ֆինանսական վերահսկողության կազմակերպումը օրվա հրամայականով պահանջում է դրամական ֆոնդերի բոլոր տեսակների պետական ֆինանսական հոսքերի տնտեսական նպատակահարմարության վերլուծություն և թափանցիկություն: Վերահսկողության և ֆինանսական կարգապահության խնդիրների իրականացման նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ընդլայնել պետական և հասարակական վերահսկողության մարմինների լիազորությունները, յուրաքանչյուր վերահսկվող սուբյեկտի համար ֆինանսական օրենսդրությամբ **սահմանել վերահսկողության միասնական ստանդարտներ, որոնք կբխեն վերահսկողության միջազգային կազմակերպությունների չափորոշիչներից:**

13. Ատենախոսությունում հիմնավորվում է, որ ֆինանսական վերահսկողության և հսկողության օրենսդրության արդյունավետ բարեփոխումների ծրագրային խնդիրների լուծմանը հասնելու նպատակով, շուկայական հարաբերությունների պայմաններում պետական ֆինանսական վերահսկողությունը վերաճում է կառավարչական գործունեության: Այդ գործոններից կարևորը սեփական ներուժի և հնարավորությունների արդյունավետ օգտագործումն է, ինչը պայմանավորված է պետական ֆինանսական վերահսկողության կադրային քաղաքականությամբ, որին այսօր կարելի է ներկայացնել մի շարք այնպիսի պահանջներ, ինչպիսիք են՝ անձնակազմի թվաքանակի, նրանց մասնագիտական և որակավորման բնութագրերի, կադրերի պաշտոնեական զարգացման (ռոտացիայի և պաշտոնեական առաջընթացի) համակարգի մշակումը և այլ գործոններ:

14. Պետական վերահսկողության լիարժեք համակարգի ստեղծմանն ուղղված բարեփոխումները պետք է ծառայեն ֆինանսական անվտանգության ամրապնդմանը: ՀՀ ֆինանսական վերահսկողության իրավական կարգավորմանն ուղղված բացահայտումների հիման վրա արվել են մի շարք առաջարկություններ, որոնք ուշադրության արժանանալու դեպքում կնպաստեն հիմնախնդրի արդյունավետության բարձրացմանը, կամրապնդեն օրինականությունը և ֆինանսական կարգապահությունը պետության ֆինանսական գործունեության ոլորտում: Առաջարկվում է.

- միջազգայնորեն ընդունված մեթոդներին ու սկզբունքներին համապատասխան մշակել ֆինանսական վերահսկողություն իրականացնող բոլոր մարմինների համար արդյունավետության աուդիտ անցկացնելու միասնական մեթոդաբանություն,
- «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը վերանայել բյուջետային միջոցներ օգտագործող սուբյեկտների կողմից օրենսդրության և հաշվապահական հաշվառման կարգերի խախտումների համար պատասխանատվության միջոցների սահմանման պահանջով,

- հստակեցնել ֆինանսական վերահսկողության մարմինների գործունեության համակարգման և կորորինացման աշխատանքները՝ վերահսկող մարմինների կողմից գործառույթների կրկնության երևույթները բացառելու նպատակով,
- ֆինանսաիրավական ակտերի միջոցով պարտավորեցնել նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարներին ուժեղացնել ներքին ֆինանսական վերահսկողությունը, ապահովել վերահսկողական միջոցառումների իրականացման պարբերականության պահպանումը: Սահմանել ֆինանսական վերահսկողությամբ և հսկողությամբ բացահայտված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ միասնական-համագործակցված աշխատանքների և քննարկումների կազմակերպման պրակտիկա,
- ֆինանսական կարգապահության պահպանման նպատակով ընդլայնել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վերահսկողական լիազորությունների շրջանակները ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացման գործում,
- բյուջետային միջոցների կառավարման արդիականացման նպատակով ֆինանսական օրենսդրությամբ սահմանել տեղեկատվական-վերլուծական համակարգ, որը կներառի մշատադիտարկում, վերլուծություն, կանխատեսումներ, պլանավորում և կառավարչական որոշումների ընդունմանն աջակցություն,
- ՀՀ պետական բյուջեի ծախսերի գործառնական և տնտեսական դասակարգման պահանջների հաշվառմամբ ձևավորել պետական միջոցների օգտագործման արդյունավետության չափանիշների և ցուցանիշների միասնական համակարգ,
- ապահովել ՀՀ ՊԵԿ ենթակայությամբ գործող հարկային և մաքսային մարմինների, ՀՀ ՖՆ ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության, գանձապետարանի և այլ վերահսկողական գործառույթներով օժտված մարմինների համատեղ գործունեությունը՝ կառավարության կողմից բյուջետային ֆինանսավորման և վարկավորման գործընթացներում անհրաժեշտ օրենսդրաիրավական և մեթոդաբանական հիմքերի մշակման գործում,
- ֆինանսաիրավական կարգավորումներով ապահովել պետական ֆինանսական վերահսկողության մարմինների միջև տեղեկատվական բազաներում առկա տվյալների փոխանակումն ու փոխադարձ հասանելիությունը,
- մշակել այնպիսի տեղեկատվական ապահովվածություն, որը համապատասխանում է վերահսկողության վերլուծական նպատակներին, երաշխավորում է վերահսկվող սուբյեկտի մասին ելակետային տվյալների ամբողջականությունը և արժանահավատությունը, բյուջեների կատարման ընթացքի և արդյունքների կապակցությամբ ակնկալվող որոշումների ընդունման հրապարակայնությունը,
- ատենախոսությունում առաջարկվում է ֆինանսաիրավական կարգավորումների ճանապարհով վերանայել պետական ֆինանսական վերահսկողության ծրագրավորման և կազմակերպման գործընթացների իրավական

հիմքերը: Առկա նյութական և ֆինանսական ռեսուրսներով, սահմանված ժամկետներում ապահովել նախատեսված վերահսկողական միջոցառումների ամբողջական և արդյունավետ իրականացումը, ֆինանսական վերահսկողության ծրագրերում հատուկ տեղ հատկացնել վերահսկող սուբյեկտների գործունեության ռիսկային ոլորտներին:

Առենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրատարակումներում.

1. Սարգսյան Ն.Ա. Ֆինանսական վերահսկողության հասկացությունն ու իրավական կարգավորումը, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Երևան, 10-12, 2013, էջ 161:
2. Սարգսյան Ն.Ա. Ֆինանսական վերահսկողության մարմինները, դրանց կարգավիճակի իրավական առանձնահատկությունները, «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հանդես, Երևան, 10-12, 2013, էջ 157:
3. Саргсян Н.А. Правовые особенности методов финансового контроля, «Экономика, социология и право» журнал научных публикаций, N 4, 6-7 апреля 2016г.; Москва, 199N, 1995-9648, էջ 73:
4. Саргсян Н.А. Методологические особенности обеспечения эффективности финансового контроля (Научная дискуссия; Вопросы юриспруденции, сборник статей по материалам // международной научно-практической конференции; N7(46); Июль 2016 года; Москва; ISSN 2309-1916, էջ 82:
5. Սարգսյան Ն.Ա. Ֆինանսական վերահսկողությունը որպես տնտեսության օրինական կառավարման և կոռուպցիայի դեմ պայքարի իրավական միջոց, «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան, 3-55, 2021, էջ 20-27:
6. Սարգսյան Ն.Ա. Հարկային վերահսկողության իրավական ձևերը, տեսակները և մեթոդները, «Դատական իշխանություն» ամսագիր, Երևան, 9-10(267-268), 2021, 15 4Դ-49:
7. Սարգսյան Ն.Ա. Ֆինանսական ստուգումները կարգավորող օրենսդրության կատարելագործման ուղղությունները, «ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» գիտական հանդես, Երևան, ISSN 1829-2828, 4, 2021, էջ 292-300:
8. Սարգսյան Ն.Ա. Ֆինանսական վերահսկողությունը Հայաստանի հանրապետությունում (Մենագրություն), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, ՀՏԴ 336.1, ԳՄԴ 65.261, Ս 259, 2020, 188 էջ:

Наири Арцрунович Саргсян **Резюме**

Кандидатская диссертация посвящена раскрытию проблем правового регулирования финансового контроля в Республике Армения, целью которого является обсуждение основных вопросов, достижений и недостатков государственного финансового контроля, разработка теоретических положений новых принципиальных правовых концепций и выдвижение на этом основании предложений относительно внесения изменений и дополнений в законодательные акты, регулирующие сферу финансового контроля.

Объектами диссертационного исследования являются задачи, цели, функции, формы и методы финансового контроля, задачи, функции, взаимоотношения органов, осуществляющих финансовый контроль, а также отношения, складывающиеся в этой сфере между государственными органами и физическими и юридическими лицами.

Предметом диссертации являются теоретические и практические аспекты, возникающие исключительно при осуществлении государственного финансового контроля. Все остальные отношения в сфере финансового контроля затрагиваются в связи с обсуждением темы и не являются предметом непосредственного исследования.

Новизной научного исследования диссертации является системное исследование вопросов нормативно-правового регулирования финансового контроля на современном этапе развития финансовой системы Республики Армения. В работе раскрыты упущения и противоречия нормативно-правового регламентирования порядка проведения налоговых и финансовых проверок, сформулированы и обоснованы предложения, направленные на совершенствование законодательства в этой сфере.

Для полного и целостного представления диссертации в работе обобщены и систематизированы основные подходы относительно понятий «финансовый контроль» и «надзор», а также относительно их задач, целей, предмета, объекта, субъектов и видов, автором предложено толкование таких понятий, как «финансовый контроль», «финансовый надзор», «мероприятия налогового контроля», «формы налогового контроля», «проверка контроля», а также на основании анализа зарубежного опыта по организации финансового контроля предложены организационные мероприятия, направленные на повышение эффективности проверки финансовой деятельности в Республике Армения, и для защиты выдвинуто около десяти основных положений диссертации, которые имеют концептуальное значение как для финансового права, так и для науки и практики.

Теоретическая и практическая значимость диссертации заключается в том, что сделанные в ходе исследования выводы и сформулированные на их основании предложения призваны обеспечить повышение научного уровня нормативно-правового регулирования и совершенствования финансового контроля, способствовать формированию научно обоснованного подхода при разработке соответствующих правовых актов финансового, бюджетного, налогового и банковского законодательства Республики Армения. Исследовав теоретические и правовые вопросы организационно-правового обеспечения финансового контроля, его субъектов, форм, видов и методов проверки, а также вопросы единства и гармонии финансово-правовых норм, диссертант раскрыл приоритетные направления совершенствования законодательства относительно финансового контроля в Республике Армения.

Nairi Sargsyan Summary

The PhD thesis is focused on revealing the “Issues of legal regulation of financial control in the Republic of Armenia”, which is aimed at discussion of the main issues, achievements and shortcomings of state financial control, development of theoretical provisions of new fundamental legal concepts and, on this basis, presentation of proposals on making amendments and supplements to legislative acts regulating the field of financial control.

The tasks, goals, functions, forms and methods of financial control, as well as the tasks, functions, relationship of authorities exercising financial control, and the relations in this field between public authorities and natural persons and legal entities are the **research subject of the dissertation**.

The theoretical and practical aspects arising exclusively in the implementation of state financial control are the **subject matter of the dissertation**. All other relations in the field of financial control are touched upon in connection with the discussion of the topic and are not the subject of direct research.

The systems research of normative legal issues of financial control at the present stage of development of the financial system of the Republic of Armenia is the novelty of the scientific research of the dissertation. The omissions and contradictions in the normative legal regulation of the procedure for conducting tax and financial audits are revealed in this study, as well as the proposals aimed at improving the legislation in this field are formulated and substantiated.

For an integrated and coherent presentation of the dissertation, the study summarizes and systematizes the main approaches regarding the concepts of “financial control” and “supervision”, as well as regarding their tasks, goals, subject matter, object, subject and the types thereof; the author proposes an interpretation of such concepts as “financial control”, “financial supervision”, “tax control

measures”, “forms of tax control”, and “audit control”. Based on the analysis of foreign experience in organizing financial control, organizational measures are also proposed to improve the efficiency of the audit of financial activities in the Republic of Armenia, and about ten main provisions of the dissertation have been put forward for defending this thesis, which have conceptual significance both for the financial law, as well as for science and practice.

The theoretical and practical significance of the dissertation lies in the fact that the conclusions drawn during this study and the proposals formulated on this basis are aimed at increasing the scientific level of normative legal regulation of financial control and its improvement, as well as to contribute to the formation of a scientifically based approach in the development of relevant legal acts in the field of financial, budgetary, tax and banking legislation of the Republic of Armenia. Having studied the theoretical and legal issues of legal and organizational support of financial control, its subjects, forms, types and methods of audit, as well as the issues of unification and harmonization of financial and legal norms, the author of dissertation revealed the priority areas of improving the legislation on the financial control in the Republic Armenia.

A handwritten signature in blue ink, appearing to be 'S. Hovhannisyan', is centered on the page. The signature is fluid and stylized, with several long, sweeping strokes.